

ժողովին Տեղեկազարին ընթերցումէն և երգերէն ետքը, խորին լուսթիւն մը տիրեց: Ամէնուն աչքը սեւեռուած էր Սրբազան Յոբելեարին վրայ, որ երկուքուկէս ժամէ ի վեր, իր ակտուն վրայ անշարժ, ձեռքը ծնոտին, աշտղարութեամբ ունկն դրած էր իրեն ուղերձեալ գրուածներու և խօսքերու:

Իր բարձրագիւղ հասակը, թեթեօքէն կքած, իր սքեմին կոկիկ ու պարկեշտ հանդերձանքով, կենդանի արձանի մը պէս բարձրացաւ իր նստած Աթոսին առջեւ, պատուանդանին վրայ:

Ամէն սք, իր շունչը զսպած, աշտղարութիւն կարած, կ'սպասէր որ խօսի Մեծ Վարդապետը:

Ու ան խօսեցաւ . . . :

Հին հեթանոսութեան պատգամախօս քուրմերէն մէկն էր պիտի բռնէ Սրբազան Յոբելեարին համար, եթէ չզիտնայի թէ հայ հողէտրական մըն էր Ան ամէնէն յառաջ. բայց այդ պահուն Տեսանողի մը կամ Մարգարէի մը գիրքին մէջ էր, աչքերը յարած ազագային, խօսքերը սովորականէն շատ աւելի ծանր ու հանդարտ, շեշտերը թափանցող, կարծես թէ կ'ուղղուէր ո՛չ թէ ներկաներուն, այլ աշխարհի չորս ծայրերը սփռուած հայութեան, մա՛նաւանդ Սրբաբառէն անդին, մտքի և հոգիի ճառագայթումներու մէջ:

ԱՄԵՆ. Ս. ՅՈՒԲԵԼԵԱՐԻՆ

ՊԱՏԱՍԻԱՆՆ ՌԻ ՊԱՏԳԱՄԸ.

— «Ի հարկէ պիտի չզարմամբ երէ ըսեմ՝ թէ յուզուած եմ խորապէս . . . եւ աւելի պիտի ընտէի լռել ու խոկալ էան թէ խօսիլ: Բայց որովհետեւ կը վախճամ կուտ մը ըլլալէ, պէտք է որ շերտնկներս շարժին:

Իմ յիսմանեայ *հանանայութեան* Յոբելեանն է միայն որ կը կասարուի այսօր. եւ երէ ուրիշներ սարբեր արժանիքներ ալ տեսան անձիս վրայ, ա՛յդ իմ ուզածս չէ: Ես հաւաւնեցայ այս հանգիստաւորութեան, ո՛չ թէ ինկզիմէն փառաւորելու, այլ՝ միշնորգաբար՝ առիթ մը ընծայած ըլլալու համար ամեն անոց որ կը սիրեն իրենց եկեղեցին, եւ նախանձախնդիր են պատուելու անոր մէկ պատօճեան, որ իր պա՛րէքը կասարած է լռի: Գիտեմ՝ թէ Հայ եկեղեցիին համար կարեւոր ծառայութիւններով ազդու մարդեր չեն պակսիր մեր մէջ, բեւե չեն ունեցած Յոբելեանի մը արժանանալու բախտը: Տարիներու որոշ ըրի մը հետ կայ չունի այդ փառաւորումը. ծառայութեան արժեքին մէջ կը կայանայ վարձքը: Ես այդ բախտաւորութիւնը ունենալով այս պահուս՝ չեմ նկատեր սակայն թէ ինձի ուղղուած ըլլան ժողովրդային համակրանքի այս բարձր ցոյցերը, ծափ ու գովեստ, այլ այդ ամենը կ'ուղեծռնին Հայ եկեղեցիին, որ ամենուս մայրն է եղած, որ իր կարք խնցուցած է մեզի ու պահած է մեր գոյութիւնը: Անո՛ր կը պարտիմ իմ արժանիքս, երէ ունիմ, եւ վարդապետական կամ վարժապետական պատօճիս մեծ մասը անով է արգիւնաւորուած:

Հոս իմ կեանքս չէ որ պիտի վերլուծեմ ձեզի. արդէն այդ մասին խօսեցան իմ սրբաբառն եղբայրակիցներս եւ աւելի սիրելիներ՝ որ աշակերտած են ինձի, վերագրելով ինձի կարգ մը առաւելութիւններ, ձեզի համար թերեւս պակաս, իսկ ինձի համար՝ մի՛շտ աւելի: Այնու ամենայնիւ շնորհակալ եմ, վստահ ըլլալով իրենց զգացումներուն անկեղծութեանը:

Յիսմանեայ *հանանայութեան* Յոբելեանին առիթ՝ ոմանք սարբեր կեօն մը ուզեցին գործածել ու պակաս մը գտան. բայց ես, ինչպէս ըսի, յուսկնութիւնը չունի՛ր՝ միամտամանակ՝ հայ հանրութեան ներկայանալու իբրեւ Գրագիտ, Բանասէր եւայլն, տիպարներ՝ որոնք *հանարարացի* մեղադրանքը միայն կը բերեն ինձի, եւ որոնք մեծ նշանակութիւն մ'ալ չունին եկեղեցիի մարդուն համար: Իրա՛ւ է որ ամբար մը ունիմ՝ զոր Աւեսարանէն առած եմ, բայց խլիխա ու Տիրոջս հետ համամայնելով ընդունուած եմ զայն, փոքրիկ ու աննշան տղոս մը վնասելու յանձնարարեամբ, եւ առաջին օրէն իսկ յայտարարուած եմ. «Տե՛ր, երէ իմ շերտնկներս բանաս, բերանս պիտի երգէ բոլ օրհնութիւններդ». ու կը կարծեմ որ այդ ամբարը չեմ ծարած երբեք: Եւ ինչո՞ւ ըլլամ *հանարարացի*, երէ յիսման

սարիներ արբազան բեմերէ Աւեստարանական հաւատքի քաղցրեցի մեր եկեղեցիի գաւակներուն, եւ նոյնչափ ու աւելի սարիներով սորվեցաւցի աննախանձաբար, զաստարանական արտոներու վրայ, ինչ որ զիստի մեր լեզուին ու մասնաւորաբան; մեր պատմութեան եւ ուրիշ ո՛չ նուազ կարեւոր ուսումներու վերաբերեամք: Գարով քանի մը տղերուս արմիք հրապարակ հանուած են, քերես զիւրանան բիմեր *խախտի* համ մը առած ըլլան անոնցմէ, բայց անոնք չե՛ն կրնար գուշակել այլ բախուած *խախտի* մը արժէնն ու կէտը:

Միտքս բացատրեցի կարծեմ...: Ուրախ եմ սակայն՝ որ գրական արտադրութեան տեսակետով ինձեզ դժգոհ մնացողներն անգամ չեն զանար իրենց մեծարանքը *խախտեցական* հոբելանիս առթիւ, խորհելով որ սպասուած եմ այն եկեղեցիին՝ որուն հարազատ գաւակներն ըլլալու պարտաւեհն չեն հրաժարիլ երբեք, եւ անո՛ր կ'ընծայեն ինձի տրուած այս պատիւը: Ուրիշ հայ եկեղեցիներու մէջ այլ մերթիւն նման հանդէսներ տեղի կ'ունենան այսօր. ու կ'զգամ որ անոնց ամենուն մէջ իմ կեանքէս շուրջ մը կ'ապրի, ու կը փառաւորով Հայոց եկեղեցին: Երախտապարտ զգայումներով կ'օրհնեմ այդ խանդավառ հոգիներուն արտաքին արտայայտութիւնները: Կ'օրհնեմ նաեւ զձեզ՝ որ հոս կը գտնուիք իբրեւ հանգիստ կաններ: Եւ երբ շնորհակալ կ'ըլլամ Աստուծոյ՝ որ իր քաղցրութեամբ օրհնեց պատկը լիստուն սարիներու ծառայութեանս այն եկեղեցիին մէջ՝ որուն պատճօնեան ըլլալի տես առաջ՝ գաւակն էի եւ եմ, չեմ ուզեր ետ նայիլ, չափելու համար այդ երկայն ասպարէզը, այլ ձեռքս աւխտասանի մանին վրայ է տակաւին, եւ պիտի շնամ հերկել նոյն նուիրան կան հողը՝ որչափ նախախնամութիւնը կեանքի մէջ ինձի: Իմ սկար ուժերս պիտի պանակ Հայ եկեղեցիին համար, երբեմնի ծիրանազգես այն Գեղարքին՝ որ հիմա ցնցոտիներ է հուզած: Ան կ'սպասէ իր բոլոր գաւակներէն հաւատքի եւ անձնուրացութեան փոխարինութիւն մը: Միտքեզ զայն, արբաւեցե՛ք անով, ու Անոր մեծութեան գանձերուն մէջ պիտի գտնե՛ք ձեր հոգեկան հարստութիւնը, պատճառ ըլլալով, երբ հարկ ըլլայ, պատահելու ձեր պատմութեանները ու անոնց լաւագոյն կտրուելով վերահին հագուելցնելու եւ զարգանելու բովանդակ հայութեան այդ սգաւոր ու դժբախտ Մայրը:

Ու Աստուած պիտի օրհնէ ամենքս ալ:

Որ սպասուած թիւն ըրաւ այս պատգամը հանգիստականներուն վրայ:

Սրբազան Յորեկարը օրհնեց բազմութիւնը, որ մեկնեցաւ երբ երգել խոմարը կ'երգէր Շարականի ազգային պատկերներէն տուն մը, «Սղոյիս կենաց եւ փրկութեան», որ ծաղկանք մըն էր Սրբազան Պատրիարքի գաւազանին ծաղկումին համար:

ԵՐՐՈՐԳ ՕՐ

Հկտմ. 28, ԲՇ. առաւ գարձեալ ժողովուած ենք Աստուծոյ Տունը: Յորեկանի ԱՌՏՈՒՆ վերջին օրն է, եւ աղօթքի հանգիստական վերջին պաշտամունքն ԱՍՏՈՐԱԳ ԵՒ ՔԱՐՁ քըն է որ կը կատարուի, Պատարագով, Բարոզով եւ Հօգեհանգիստով:

Հանգիստողին է Գորեվանքի անդրանիկ գասարանէն Կ. Պոլսի նախկին պատրիարք՝ Ամեն. Տ. Զաւէն Սրբազան:

Սրբազան Յորեկարը իր ուսուցչական ծառայութեան շատ կարեւոր մէկ շրջանը բոլորած է Արմաշի Գորեվանքին մէջ, նախ հոգեւոյն Օրմանեան Սրբազանի հետ եւ յետոյ առանձինն, նուիրակելով նոր եկեղեցականներու պատրաստութեան: Գորեվանքի մէջ էր որ Գուրեան ողին եղաւ նոր դաստիարակութեան, եւ առիթ ունեցաւ տարիներով զբաղել այդ դաստիարակութեամբ կերտելու համար ուղեղը եւ նկարագրի բազմաթիւ աշակերտութեան մը եւ նուիրելու դաննք Հայոց եկեղեցւոյ ծառայութեան:

Գորեվանք ա՛յնպիսի հաստատութիւն մը հանգիստացաւ, իբրեւ եկեղեցական վարժարան, որուն վրայ անկուեցաւ ազգային աչքը:

Անդրանիկ գասարանէն սկսեալ մինչեւ վերջինը, տուեալ պայմաններու մէջ, լաւագոյն արդիւնք տուին: Գուրեան եւ Օրմանեան իրենց մէջ բաժնած էին գասերուն ա-

մէնէն կարեւորները: Անդրանիկ դատարանը լիովին վայելց կերպու ռուսացիչներուն եւ գաղտնիարարներուն ալ մտքին ինամքը:

1895-6 թ ղեկավարէն ետքը ամբողջ Թիւրքիոյ հայութեան առաջնորդութիւնները պէտք ունէին նոր ոյժերու: Գպրեվանքցի նորընծաներուն բուռեցաւ, «զնայէք այսուհետե...»: — Անոնք, թէև երխտասարգ եւ անխորձ, արխարար նետուեցան իրենց առջև բացուած սուպրէզները, մնացին միշտ աշխատութեան եւ ծառայութեան պատնէչին վրայ, մինչև պայթումը աշխարհաւեր մեծ պատերազմին, 1914 . . . :

Այդ թուականին պատմութիւնը գրեէ ամէն հայ:

Գպրեվանքցիներ իրենց եկեղեցւոյն ծոցը եւ իրենց ժողովուրդին գլուխը, ենթարկուեցան հարձանքի բոլոր անգլխութիւններուն:

Նահատակութեան արխնով մկրտուեցան ոմանք, մաքրուելով իրենց մարդկային ակարութեան մեղքերէն: Շատեր խոստովանողներու համբերութեամբ տանջուեցան:

Գպրեվանք այլևս պատմութեան կը պատկանի: Եւ այդ բոլոր կորուստներէն, կ'ապրի Դուբանի ողին, իր խումբ մը աշակերտներով, որոնց մին է Ջաւէն Սրբազան, որ մագ մնաց աքսորի գոհերէն մէկն ալ ինքն ըլլար, Իրաքի խուլ մէկ անկիւնը, եթէ նախախնամութիւնը չպահպանէր զինքն:

Ջաւէն Սրբազան, — որ 1896 ին, Գպրեվանքի գոյութեան ամէնէն փափուկ մէկ պահուն, երբ Օրմանեան եւ Դուբեան հեռացած էին անկէց, այդ սիրելի հաստատութեան պահպանն եղաւ, — քաղցր եւ զառն յիշատակներով ակադճուն, Յորելեանի վերջին օրը, Սրբոց Յակոբեանց Տաճարին մէջ, Դուբեանի ներկայութեամբ, Աստուծոյ սեղանը պիտի բարձրանար, Գպրեվանքի անունով աղօթելու եւ փառաւորելու Գպրեվանքի Ողբին եւ Մեծ-Վարդապետին Յորելեանը եւ օրհնելու հանգուցեալ եւ նահատակեալ բոլոր Գպրեվանքցիներուն յիշատակը:

Ջաւէն Սրբազան, որ Ջահլէի ամառանոցէն յատկապէս եկաւ Երուսաղէմ իր Մեծ-Վարդապետին Յորելեանը շնորհաւորելու, շքեղացուց կրօնական վերջին հանգէսը իր հեշտալուր կարգացուածքով եւ քարոզով:

Ճո՛խ է Ս. Յակոբին դանձարանը: Լուսարարուպետ Սրբազան ոսկեհուռ զգեստով եւ ականակուռ խոյրով զգեստաւորած էր Սրբազան պատարագիչը, որուն աւլնթերակայ էին Տ. Ատոյմ եւ Տ. Յովհաննէս քահանաներ, բուրվառ կ'ընէին Արփիար եւ Մատթէոս Սարկաւազունք, խկ քշոցակիր էին, Ներսէս, Հայկ, Եզնիկ եւ Սիմոն Սարկաւազունք:

Ճաշու զիրքէն ետքը, Ջաւէն Սրբազան խօսեցաւ իր քարոզը, ընդլայնելով Տիրոջ նշանաւոր յայտարարութիւնը, թէ Ո՛չ եկի պաշտօն առնուլ, այլ պաշտել: Մատնանիչ ըրաւ Սրբազան Յորելեարին օգտակար ծառայութիւնը, իր քահանայութեան յիսուն տարիներու ընթացքին, մամաւորապէս վեր հանելով Ն. Բարձր Սրբազնութեան Գպրեվանքի մէջ մատուցած ծառայութիւնը, եւ պահ մը փոխադրուելով Գպրեվանքի փալուտն օրերուն, պատկերացուց ծառայութեան եւ աշխատութեան ողին, որ հիմայ փոխադրուած է, ըսաւ, Սիոնի բարձունքին վրայ, շարունակելու համար Գպրեվանքի մէջ ընդհատուած գործը: Անդրադարձաւ Գպրեվանքցիներու իրենց Մայրենի եկեղեցւոյն մատուցած ծառայութիւններուն վրայ, յուզմամբ յիշեց անոնցմէ ոմանց նահատակութիւնը:

Ջաւէն Սրբազան իր քարոզը կնքեց մագլմանքներ ընելով Յորելեար Սրբազանի առողջութեան եւ արեւշատութեան համար:

Պատարագէն ետքը կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն Գպրեվանքի հանգուցեալ եւ նահատակ հոգեւորականներուն յիշատակին՝ Սրբազան Յորելեարի հանգիստ պետութեամբ, եւ Ջաւէն Սրբազան Քրիստոս Ռաբի Աստուծոյ աղօթքին մէջ յիշատակեց միառմի հանգուցեալ եւ նահատակ Գպրեվանքցիներուն անունները:

Շատ արտայայտ կղաւ այս պաշտամունքը: Արմաշ եւ Սիոն իրենց հանգուցեալներով եւ իրենց ողջերով, կը միանային իրենց Մեծ-Վարդապետին Յորելեանին առթիւ, Սրբոց Յակոբեանց Տաճարին մէջ, Սրբազան Յորելեարի հոյակապ շուքին ներքև:

Եկեղեցւոյ աւարտումէն հօրք Ս. Յակոբի գաւիթին մէջ, ի յիշատակ Յորելանի, մեծ խմբանկար մը ասուեցաւ, կեղրանը Արբազան Յորելիարը, շրջապատուած եպիսկոպոսներէ, վարդապետներէ, քահանաներէ, և խորքը՝ Ժոնդրցի. Վարժարանի և Ընծալարանի աշակերտներ:

Ըստ յորելինական հանդէսներու Յարապրին, այս աստու ժամը 9-12ին, Արբազան Յորելիարը կատարեց պաշտօնական ընդունելութիւնը: Նախ կան Երուսաղէմի հոգեւոր իշխանութեանց և հաստատութեանց ներկայացուցիչները, ապա Պաղեստինի կառավարութեան և

Երուսաղէմ Քաղաքի վարչական մարմիններուն ներկայացուցիչները և ապա բոլոր հիւպատոսներ: Յունաց ծերունադարձ պատրիարքին կողմէ — ինքն կաթուածի հիւանդութեամբ արգիլուած ըլլալուն — վեց հոգինոց պատգամաւորութիւն մը եկաւ, զլիսուորութեամբ Պարքին. Փոխանորդ Եւզորոս Արբազանի, իսկ Ս. Պապին Առաքելական նախարար Ն. Բրձ. Մօնա. Վալէրիօ Վալէրի՝ Հայր Ֆրէտ. Կրիմձօի հետ, Երուսաղէմի Լատին Պատրիարքը, Մօնա. Լուի Պարլասինա՝ Փխնրդ. Մօնա. Ֆրնա. Ֆլիմնկէրի հետ, Ֆրանչիսկեան Միաբանութեան Մեծաւորը Կեր. Օքիւլիօ Մարթիթա՝ կրօնաւորի մը հետ, Երուսաղէմի Անկլիքան Եպիսկոպոսարանի կողմէն — ի բացակայութեան Մէկ-Ինչու Եպիս. — Աւագ Սարգիսապ Սիւրբըրտ և Տքթ. Պօլընթըն, Ռուսաց Արքեպիսկոպոս Անաստաս Արբազան՝ Ռուս միսիօնի ներկայացուցիչ Արշիմանարիտ Կիպրիանոսի հետ, Ֆրանսերէն զրուած ուղերձով մը, Ղպտիներու կողմէն չորս հոգինոց պատգամաւորութիւն մը՝ Բասիլիտո Եպիսկոպոսի զլիսուորութեամբ, Ասորաց Եպիսկոպոսը Տ. Միխայէլ՝ Հայր Եուհաննա Տիւլարանիի հետ, Սուրբն Եփրեմի երգերուն Սաղերէն ապագիր հատարով մը, Կերման Միաբանութեան կողմէն Կեր. Մօրիւս Քօֆման՝ կրօնաւորի մը հետ, Կարտինալ Ֆարրարի զպրոցի կողմէն Եզրայր Ալֆօնսօ՝ կրօնաւորի մը հետ, Գոմինիկեանց կողմէն Հայր Արէլ և Հայր Սազիմեաք: Պաղեստինի և Անգլո-Յորդանանի Բարձր Քովտէր Ն. Վ. Սըր ձօն Ռօպըրթ Չէնսըրբի կողմէն՝ Պետական Քարտուղար Մր. Հէրբի Չարլըս Լիւք և թիկնապահ Քէֆթըն Միլըր (համազղեհատով), Հանրային ապահովութեան Տնօրէն Հրամատար Մալքոզորտաթօ, Ոստիկանութեան Փոխ-Հրամատար Մէյձըր Վէնրայթ, Ընդհանուր Գատախազ Մր. Նօրման Պէնթուիչ, Հանրային Կրթութեան Տնօրէն Մր. Պօմըն, Փօստի և Հեռագրի և Հեռախօսի Տնօրէն Մր. Հրասըն, Դաղթականութեան և Հպատակութեան Տնօրէն Մր. Հէյմսըն, Ասոզլ. Վարչութեան Տնօրէն Քըրնըլ Ռիչմընտ, Հանրային Բարոյականի Տնօրէն Միս. Մարգրիտ Նիքսըն, Երուսաղէմի Կառավարիչ Վսեմ. Ի. Քիթ Ռօչ և փոխանորդը Ռուհի Պէյ, իրենց հետեւորդներով, Երուսաղէմի Քաղաքապետ Վսեմ. Բաղըպ Պէյ Նաշաշիպի: Իսկ նամակով իրենց շնորհաւորութիւնները ուղղեցին. Պաղեստինի Գատապետ Վսեմ. Միշէլ Ֆ. Մ. ձ. Մէկ-Տօնէլ, Նապլուսի Գատաւոր Ա. Ք. Ռէպ, Ն. Վ. Բարձր Քովտէր անձնական Քարտուղար Արչըր Քըսթ, Հանրօգուտ Շինութեանց Փոխ-Տնօրէն Չ. Ու. Քօվէլ, Հոգային Գատարանի Նախագահ Գատաւոր Թըթ, Հնազանդութեանց Տնօրէն Մր. Էրնէսթ Ռիչմընտ և Անկլո-էճիփըն Գրամատան Տնօրէն Ա. Փ. Ս. Քլարք, և Գոմինիկեան միաբանութեան անդամներէն ծանօթ գիտնական Հայր Լակրանմ:

Երուսաղէմի հիւպատոսական մարմինն անձամբ եկան շնորհաւորութեան. Ֆրնակն. հիւպ. Vicomte D' Aumal, իր հետեւորդներով. — Իտլին. հիւպ. Commandatori Giovanni Paschale. — Գերմանի. հիւպ. Dr. Erich Nord իր գտակր հետ. — Աւստրին. հիւպ. Dr. Haas. — Յնկն. հիւպ. Mr. Benotados. — Բոլնի. հիւպ. Mr. Titus Zbyszewski. — Հնդրկն. հիւպ. Mr. Elias Thos. Gelat. — Հնոսկն. հիւպ. Mr. Van Vriesland. — Բերուի հիւպ. Mr. Salvator Stephan. — Լիթւնի. հիւպ. Mr. M. Caspi. — Եզրպին. հիւպ. Abdine Bey. — Թիւրք. հիւպ. Atif Riza Bey. — Իսկ նամակով շնորհաւորած էին. Չիսօպ. հիւպ. Dr. Vladimir Fric. — Մեքսիկայի հիւպ. Mr. Ferd. Damiani. — Շուէտի հիւպ. H. L. Larsson: Նոյնպէս, Նիյր Իսթ Բըլիֆի Պաղեստինի ներկայացուցիչ Մր. Է. Պրէշֆօրտ, անձամբ եկաւ շնորհաւորելու:

Արբազան Յորելիարը ասանց յոգնութեան նշան ցոյց տալու մինչև վերջը իրեն յատուկ ժպիտներով և սրախօսութիւններով կատարեց ընդունելութիւնը, Արբազան Եպիսկոպոսներու հետ, սրանք միշտ զբաղած մնացին հրերբով:

Շնորհաւորութեան եկողներ մեծարուեցան շանրանեայով և առաջնակարգ սիկա-
թէթներով: Ազատարկութիւն ըլլին Ալէնայի օթելին սեամորթ սեղանապետները:

Կէսօրէն ետքը, ժամը մէկին, կոչնակին ձայնը կ'ազդարարէր թէ պատրաստ է յո-
3ՈԲԵԼԻՆԱԿԱՆ բելինական ճաշին սեղանը, որուն մասնակցեցան Միարանու-
ՃԱՇ Թիւնը, Ժառանգաւորք, Սարկաւազունք, ինչպէս նաև յատ-
կապէս հրաւիրեալներ երեսուողէմի հայութենէն, նոյնպէս Վեր-

Տ.թթ. Պօլընթըն և Մր. Պէլէֆօրտ:

Արբազան Յորելարը Եպիսկոպոսներու հետ մուտ գործեց սեղանատուներ և անցաւ
պատրիարքական մարմար սեղանին զուտը, իր աջ կողմը ունենայով Զաւէն Արբազանը:
Ճաշոցը պարզ էր, — հաւ, բրինձ փիլաւ, մսով պամեա, խնձոր և զինի:

Արբազան Յորելարը օրհնեց սեղանը և հրաւիրեց սեղանակիցները վայելել Սուրբ
Յակոբին հացը:

Մինչև ժամը 3 տեւեց սեղանին զուարթութիւնը, որուն վրայ բաժակներ առաջար-
կուեցան ծափերու մէջ:

Զաւէն Արբազան բաժակ առաջարկեց Արբազան Յորելարին կենաց:

Մկրտիչ Արբազան՝ Ամեն. Հայոց Վեհ. Կաթողիկոսին կենաց, որմէ ետքը, ոտքի
վրայ, միաբերան երգուեցաւ Լջ Միամիլնն ի Հօրե շարականը:

Բարդէն Արբազան՝ Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսին և յետոյ Կ. Պոլսի Ամեն. Ս. Պատ-
րիարքին կենաց:

Արտաւազգ Արբազան՝ Արբոց Յակոբեանց Միարանութեան կենաց:

Տ. Ատովմ Աւագ Բհնյ. Մելիքեան՝ Արբազան Յորելարին կենաց:

Տ.թթ. Վ. Գալպիեան՝ Հայ ժողովուրդին կենաց:

Տ.թթ. (Աստուածաբանութեան) Պօլընթըն, որ Հայր Պրիճմէնի արձակուրդով բացակա-
յութեան այս տարի, կը դասախօսէ Լնձայարանի և Ժոնդրց. Վարժարանի մէջ, իր համակ-
րանքը յայտնեց հայ ժողովուրդին և Ամեն. Հայոց Հայրապետին, — որովհետև էջմիածին
գտնուած և մօտէն ճանչցած է Ն. Ս. Օծութիւնը—, և Արբոց Յակոբեանց Յորելար Գա-
հակալին, և դաւաթ մը ջուր աննելով, փոխանակ զինի, խնդրեց որ ջուրի զաւաթները
խմեն հայ ժողովուրդի և Հայց. Եկեղեցւոյ բարգաւաճումին համար: Եւ յիշելով Հայ և
Եպիսկոպոսական Եկեղեցւոյն սիրտը յարաբերութիւնը, ըսաւ թէ այս պահուս երբ ուրախ է
մէկ կողմէն, այս հանդէսին մասնակցելուն առթիւ, բայց ախուր է միւս կողմէն, քանի
որ գոյժ մը ստացեր է Նիւ եորքէն, որ կ'ողբայ Եպիսկոպոսական Եկեղեցւոյն Ազգային
Ժողովին նախագահ Most. Rev. Bishop John Gardner Murrayի յանկարծական մահը, Հոկտ.
3ին: Ս. Պատրիարք Հայրը հոգւոց ըսաւ ողբացեալ Եպիսկոպոսի հոգւոյն համար:

Տ.թթ. Պօլընթընի ուղերձը հայերէնի թարգմանեց Հայր Կիւրեղ:

Բոլոր բաժակաձառերն ալ, զգացումի և հաւատքի, աղուոր բաղձանքներու ար-
տայայտութիւններ էին, ինչպէս նաև զուարթ սրախօսութիւններու, ամէնքն ալ ոգե-
ւորուած Յորելանի ողիով:

Ժառանգաւորք և Սարկաւազունք քանի մը ընտիր էրգերով հանգիստ տուին բա-
ժակաձառերուն: Իսկ Տ. Ատովմ իր անաւոր ձայնով երգեց Հայաստանը, վախցնելով
պատմական սեղանատան խոնարհ կամարները:

Արբազան Յորելարին օրհնութեամբն կնքուեցաւ ճաշկերոյթը, որով և վերջացաւ
Յորելինական Հանդէսներուն Յայտադիրը անթերի կանոնաւորութեամբ:

